Հավելված

Հաստատված է ՀՀ ոստիկանության պետի 2011 թ.

փետրվարի « 2 »-ի N 188-Ա հրամանի

Փոփոխված է ՀՀ ոստիկանության պետի 2014 թ.

հունիսի « 11 » -ի N 1946- Ա հրամանի

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԲԱԺՆԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

(03-Հ-3.2-253)

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) ֆինանսատնտեսային վարչության (այսուհետ՝ Վարչություն) սոցիալական ապահովման և կենսաթոշակների նշանակման բաժնի կենսաթոշակների նշանակման և հաշվառման բաժանմունքի (այսուհետ՝ Բաժանմունք) առաջատար մասնագետի պաշտոնը ընդգրկվում է քաղաքացիական հատուկ ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում:

2. Բաժանմունքի առաջատար մասնագետին «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը:

## II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Բաժանմունքի առաջատար մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժանմունքի պետին:

4. Բաժանմունքի առաջատար մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Բաժանմունքի առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի առաջատար մասնագետներից մեկը:

6. Բաժանմունքի առաջատար մասնագետը՝

1) Բաժանմունքի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) Բաժանմունքի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժանմունքի աշխատանքների ծրագրմանը.

3) կատարում է Բաժանմունքի պետի հանձնարարականները.

4) պատասխանատվություն է կրում օրենքների, իրավական այլ ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

## III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Բաժանմունքի առաջատար մասնագետը Բաժանմունքի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժանմունքի գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

## IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Բաժանմունքի առաջատար մասնագետը՝

1) Վարչության ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Ոստիկանության ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների ու պաշտոնատար անձանց հետ շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ՝ իր լիազորությունների շրջանակներում.

3) Բաժանմունքի պետի հանձնարարությամբ Ոստիկանությունից դուրս շփվում և պարբերաբար հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն:

## V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Բաժանմունքի առաջատար մասնագետն, իր լիազորությունների շրջանակներում, մասնակցում է Բաժանմունքի գործառույթներից բխող բարդ խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

## VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Բաժանմունքի առաջատար մասնագետը՝

1) ունի տնտեսագիտություն և կառավարում (080000) մասնագիտություններով բարձրագույն կրթություն, քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններում կամ քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտականաշխատանքային ստաժ.

2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, քաղաքացիական հատուկ ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության, «Ոստիկանությունում ծառայության մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Գնումների մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին» 1998 թվականի մարտի 13-ի N 173, «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» 2002 թվականի հունվարի 18-ի N 48, «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» 1998 թվականի օգոստոսի 25-ի N 525 որոշումների և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

4) ունի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան ձևի ձևակերպված թույլտվություն.

5) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

6) տիրապետում է (կարդում և կարող է բացատրվել) ռուսերեն լեզվին:

## VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Բաժանմունքի առաջատար մասնագետը՝

1) իրականացնում է Բաժանմունքի գործառույթներից բխող աշխատանքները և պատասխանատու է դրանց ժամանակին ու որակյալ կատարման համար.

2) կադրերի վարչությունից և կադրային ծառայություններ ունեցող ստորաբաժանումներից ստացված կենսաթոշակների նյութերի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկում է նախկին ծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների չափերը և հաշվառում նրանց, իրականացնում է կենսաթոշակի հաշվարկ, գործի մուտքագրում համակարգչի մեջ և քարտերի լրացում.

3) ապահովում է սահմանված կենսաթոշակների ու դրամական օգնությունների վճարումները.

4) Բաժանմունքի պետի հանձնարարությամբ՝ մասնակցում է Բաժանմունքի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

5) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժանմունքի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

6) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

12. Բաժանմունքի առաջատար մասնագետն ունի Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ (սահմանափակումներ):

## VIII. ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

13. Բաժանմունքի առաջատար մասնագետի առողջական վիճակը համապատասխանում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված,քաղաքացիական ծառայողին ներկայացվող առողջական վիճակի հետ կապված պահանջներին:

## IX. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

14. Բաժանմունքի առաջատար մասնագետին Օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան: